

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (21-րդ տարի)

Այս թիւով.....

Խմբագրական՝ Վերամուտ 42 Էջ 2

Սեպտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 3-5

Գիտէի՞ր թէ
Վարագայ Սուրբ Խաչ
Վարագավանք
Խաչվերաց
Սուրբ Գեորգ Զօրավար
Նիկիոյ Ժողով
Նաւակատիք

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 6 -9

*Հայ Եկեղեցին» Էջ 10-11

Վերամուտ 2020-21 Էջ 12

Ամսուան Համարը

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը»:

Աւետարան ըստ Մարկոսի 10.14

Սեպտեմբեր 2021 (ԻԹ տարի թիւ 1)



Կ... ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ
ԴՊՐՈՅ

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Վերամուտ 42

Մեր ժողովուրդի ամենէն կարեւոր հարստութիւնը մեր բարոյական դիմագիծին առողջութիւնն է եւ երբ մեր նոր սերունդը հայ քրիստոնէական դաստիարակութեամբ եւ մեր մայրենի եկեղեցւոյ մաքուր կաթով չի սնանիր, կը նշանակէ թէ արդէն բարոյական այլասերումի վտանգը կը սպառնայ մեզի:

Պատմութիւնը կը վկայէ թէ՛ աշխարհասփիւռ մեր գաղութներուն երկարակեցութիւնը կախեալ է ոչ թէ տուեալ գաղութի նիւթական պայմաններէն, այլ անոր հոգեւոր արժէքներէն ու բարոյական սկզբունքներէն:

1980 Սեպտեմբերի 14-ին ծնունդ առած Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը կը պատրաստուի իր 41-րդ յաջորդական տարեշրջանին: Այո, այս վերամուտը Covid-19 թագաժահիրին պատճառով կը տարբերի նախորդ 40 վերամուտներէն, սակայն մեր նպատակը կը մնայ նոյնը...:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումին հետեւանքով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին, հիմնականօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Մաշտոցի Արձագանգ»ի 29-ամեակին ընդմէջէն պիտի շարունակենք մեսրոպատառ գրութիւններ ներկայացնել մեր աշակերտներուն, մանաւանդ համացանցին վրայ: Մեր կայքէջը, www.sourphagop.org-ը իր 21-րդ տարին պիտի ամբողջացնէ:

Այս տարի եւս, օգտագործելով զանազան միջոցներ, պիտի շարունակենք սորվեցնել մեր աշակերտներուն.

- Հայ բարքեր եւ կենցաղ
- Հայկական տօներ ու սովորութիւններ
- Երգեր եւ շարականներ
- Հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ
- Հայ եկեղեցւոյ պատմութիւն
- Ձեռային աշխատանքներ:

Այս բոլորը՝ Հայ Քրիստոնէայ նկարագիր մը կերտելու համար:

Թող Բարձրեալն Աստուծոյ աչքն ու աջը հովանի ու առաջնորդ ըլլան Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին, որպէսզի մեր ժողովուրդի նոր սերունդի զաւակները «պարարտ հողի մէջ աճելով պտուղ տան, մէկի տեղ երեսուն, մէկի տեղ վաթսուն, կամ մէկի տեղ հարիւր»:

«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը մեր բոլորին հետ ըլլան: Ամէն»:

Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 4	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Կիր. 5	Բարեկենդան Ս. Խաչի Պահոց
Գշ. 8	Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի յԱննայէ
Շբթ. 11	Նաւակատիք Սուրբ Խաչի
Կիր. 12	Տօն Վերացման Ս. Խաչին (Խաչվերաց)
Բշ. 13	Յիշատակ Մեռելոց
Շբթ. 21	Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան օր
Շբթ. 25	Սուրբ Գեորգ Զօրավար
Կիր. 26	Տօն Վարագայ Սուրբ Խաչի

Պահքի Օրեր: 1, 3, 6,7,8,9,10, 15, 17, 21, 22, 23, 24, 29,

Գիտէի՞ր թէ

1. Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ Թափօր-Անդաստանը:
2. Հայց. Եկեղեցոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան միրգեր:
3. Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:
4. Հայց. Եկեղեցին ունի Ս. Խաչի 3 տօներ եւս. Գիւտ Խաչի, Վարագայ Խաչ, Երեւման Խաչ:
5. Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի վերամուտը ամէն տարի Խաչվերացին տեղի կ'ունենայ:

Վարագայ Սուրբ Խաչ Ամէն տարի Սուրբ Գեորգին յաջորդող Կիրակին, որ միշտ Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին է, Հայաստանեայց Եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարագայ Ս. խաչի տօնը: Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեւման Վարագ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Ըստ աւանդութեան, Ս. Հռիփսիմէն այդ տեղ պահեր է իր վիզի խաչը: Հոն, շուրջ 653 թուականին, երկու ճգնաւորներ, Յովէլ եւ Թողիկ, տեսիլք մը կ'ունենան. հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարագ լեռներ, ուր լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:

Վարագավանք Կը գտնուի Վան քաղաքին հարաւարեւելեան կողմը, Վարագ լեռան արեւմտեան լանջին: 653-ին երբ յայտնի կը դառնայ Վարագայ Ս. Խաչի «Նշան»ի տեղը, Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին, կը կառուցէ Ս. Նշան եկեղեցին եւ կը հաստատէ Վարագայ Ս. Խաչի տօնը: 870-ին արաբները կը գրաւեն Վարագավանքը, սակայն շատ չանցած Աշոտ Արծրունի իշխանը կ'ազատագրէ գայն: 1857-ին Վարագավանքի վանահայր կը նշանակուի Խրիմեան Հայրիկը «Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի»: Վանքը 1915-էն ի վեր լքուած է եւ ներկայիս աւերակ վիճակի մէջ կը գտնուի:





ԽԱՉՎԵՐԱՑը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Ան Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարևորն է, որովհետև նուիրուած է խաչին գերութիւնէն վերադարձին, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է:

610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զօրքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերը կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններուն մէջ էր նաև Երուսաղէմի Զաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այն տեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որ Դ. դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հելինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնէաներու համար:

628 թ. Բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը Մծեծ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ Բիզանդացիները յաղթանակ կը տանին:

Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն զայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարձի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդին համար:

Խաչը քրիստոնէաներու համար Աստուծոյ զօրութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս, տալով մեզ յաղթութեան զէնքը՝ ընդդէմ սատանային ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզի համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Սուրբ Գէորգ Զօրավար

Խաչվերացէն 13 օրեր ետք եկող շաբաթ օրը Ս. Գէորգ է: Ան նահատակուած է Նիկոմեդիոյ մէջ մօտաւորապէս 303 թուականին:

Հասակ առած է քրիստոնէայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284 - 305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնէաներուն դէմ, Գէորգ զօրավարը կը պատռէ Նիկոմեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը:

Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի, որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին: Ասոնցմէ ամենածանօթը այն է որ Գէորգը վիշապ մը սպաննելով կոյս մը ազատած է եւ այդ պատճառով կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:

Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գէորգը (Saint George): Սուրբ Գէորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը եւ եւրոպական ժողովուրդները:



Նիկիոյ Ժողով

Արիոս Աղեքսանդրացի, իմաստասիրական հմտութեամբ ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու փափաքեցաւ: Այն ժամանակ Յիսուսի անձին վրայ խնդիրներ կային եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակետը թէ Յիսուս Քրիստոս չէ մարդացեալ Որդին Աստուծոյ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառացի իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ գաւառական ժողովներու մէջ, 312-ին եւ 319-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոսը Նիկոմիդիոյ մէջ տեղի ունեցած ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը: Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վեճերը ընդհանրացան եւ եկեղեցւոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզելով, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակէսը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր յանձնեցին անոր եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակէս եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարաձայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին եւ Արիոսը նզովեցին: Կոստանդիանոս ալ զայն աքսորեց: Նիկիոյ ժողովին մասնակցած հայրապետներու անուանացանկին մէջ կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակէսն է, թէպէտ օրինակէ օրինակ անունը աղաւաղուած է: Յատուկ գործունէութեան կամ բանախօսութեան յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը պայքարողներու անունները կը տեսնուին ժողովի ատենագրութեանց մէջ: Արիստակէս ժողովէն ուղղակի վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովք ժողովոյն (ԽՈՐ. 177): Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով ընդունեց եւ հռչակեց Նիկիոյ կանոնները, «եւ սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու» (ԽՈՐ. 177):

Մաս տուողը կ'ըսէ. «Մասն եւ բաժին եղիցի Սուրբ Պատարագիս»
 Մաս ստացողը կ'ըսէ. «Բաժին իմ Աստուած Յաւիտեան»

Նաւակատիք (նոր կերտել, նոր շինել) նորաշէն տաճարի, եկեղեցւոյ, ամէն նորի բացման, տարեդարձի ու նուիրագործութեան հանդէս: Նաւակատիք է նոր աւարտած եկեղեցւոյ առաջին նուիրագործութիւնը, ինչպէս նաեւ՝ նուիրագործութեան տարեդարձը: Հայ եկեղեցին նաւակատիքները սկսած է կատարել կամ յիշատակել մեծահանդէս տօներու նախընթաց օրերուն: Նաւակատիքով պահքի խստութիւնը կը մեղմացուի՝ առանց զայն ամբողջովին վերացնելու, այսինքն՝ մսեղէնը խստիւ արգիլելով՝ կը ներուի ձկնեղէնի ու կաթնեղէնի կիրառութիւնը Պատարագի մատուցումէն ետք:

Այդպէս է նաև Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներու նախընթաց օրերուն: Այսինքն՝ Վարդավառի, Աստուածածնի Վերափոխման ու Խաչվերացի նախընթաց շաբաթ օրերուն, առաւօտեան Պատարագէն ետք, իսկ Ս. Ծննդեան ու Ս. Զատիկի ճրագալոյցերուն, երեկոյեան Պատարագէն յետոյ կաթնեղէն ու ձկնեղէն գործածելը նոյնպէս Նաւակատիք կը նշանակէ:

Նաւակատիքը իբրև առանձին տօն կը նշուի Խաչվերացի տօնի նախընթաց շաբաթ օրը, 4-րդ դարու բիզանդական կայսրուհի Հելինէի նախաձեռնութեամբ Երուսաղէմի Սուրբ Յարութեան մեծ տաճարը շինուելէն ետք զայն նուիրագործելու և օծելու տարեդարձի օրը, որ ամբողջ քրիստոնէայ աշխարհի համար կարելոր յիշատակ է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան, ----- մի՛
ըլլաք անոնց, որովհետեւ ----- է Աստուծոյ
-----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցան
«Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցները».
ա. 1900
բ. 1929
գ. 1979
դ. 1980:

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
Մոնթրէալի Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցը.
ա. 1900
բ. 1929
գ. 1979
դ. 1980:

3.- Այս տարի «Մաշտոցի
Արձագանգ»ի քանի՞ երորդ
տարեդարձն է:
ա. 6
բ. 32
գ. 17
դ. 29:

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ
երկու մասերէ. առաջին մասը
կը կոչուի «--- Կտակարան» իսկ
երկրորդը՝ «Նոր -----»:
Առաջին մասը գրուած է Քրիստոսէ ---
-- իսկ երկրորդը ----- ետք:

5.- Ի՞նչ կը կոչուի այն տաղաւարը
որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան
ընթացքին.
ա. Խաչվերաց
բ. Սուրբ Ծնունդ
գ. Սուրբ Զատիկ
դ. Սուրբ Աստուածածնի
Վերափոխում:

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն տօնը
կը տօնենք Սեպտեմբերին.
ա. Սուրբ Սարգիս
բ. Սուրբ Գեորգ
գ. Սուրբ Թադէոս
դ. Սուրբ Պետրոս:

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին
կեդրոնական մասը.
-----:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ
մկրտուեցաւ.
ա. 6
բ. 32
գ. 30
դ. 33:

9.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին առաջին 4 տողերը.

Կիրակնօրեայ Սուրբ յարկին
մենք ----- ենք լուսաբաղձ
Կայծերու պէս -----
Ցայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին երկրորդ 4 տողերը.

Ուստի քալենք -----,
Ո՛վ հարազատ զարմ -----
----- գընացքով
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13րդ գլուխին երեք հիմնական շնորհներն են Հաւատք, Յոյս եւ Սէր, եւ այս երեքն ամենէն մեծն է...

- ա. հաւատքը
- բ. յոյսը
- գ. սէրը
- դ. Աստուածային հիմնական շնորհները թիւով 4 են:

4.- Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը: Աւագ շաբթուան ո ը օրն էր այդ.

- ա. Երկուշաբթի
- բ. Ուրբաթ
- գ. Հինգշաբթի
- դ. Չորեքշաբթի:

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.- Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, օրհնեալ է...

- ա. Քրիստոսի Ծնունդը
- բ. Յայտնութիւնը Քրիստոսի
- գ. Յարութիւնը Քրիստոսի
- դ. Անունը Քրիստոսի:

6.- Պատարագի ընթացքին ո՞վ (որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...».

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները:

7.- Ս. Պատարագի ընթացքին Ողջոյն տուողը կ'ըսէ: «Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ»:

8.- Ս. Պատարագի ընթացքին ողջոյն ստացողը կը պատասխանէ. «----- է ----- Քրիստոսի»:

9.- Հինգ տաղաւարներն են.-Ս. Ծնունդ, Ս. Զատիկ, Այլակերպութիւն, Վերափոխումն Ս. Աստուածածնի եւ

....

- ա. Մեռելոց
- բ. Խաչվերաց
- գ. Ծաղկազարդ
- դ. Համբարձում:

10.- Ս. Զատիկէն 40 օրեր ետք կը տօնենք.

- ա. Համբարձում
- բ. Երեւում
- գ. Այլակերպութիւն
- դ. Յայտնութիւն:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Ամբողջացո՛ւր:

1.- ----- կը կոչուի եկեղեցւոյ արեւմտեան բաժինը որ տաճարէն բաժնուած է պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որոնք պատրաստ չէին հաղորդութիւն ստանալու:

2.- 325 թուականի Նիկիոյ ժողովին Հայաստանեայց եկեղեցւոյ ներկայացուցիչն էր, - - - - - ը Գրիգոր Լուսաւորչի որդին:

3.- 325 թուականին գումարուած Նիկիոյ ժողովին մասնակցեցան - - - հայրապետներ (կամ անոնց ներկայացուցիչները):

4.- Առաջին տիեզերական ժողովը տեղի ունեցաւ - - - - - մէջ, - - - թուականին :

5.- Խաչվերացը կը տօնենք Սեպտեմբեր - - ի ամենէն մօտ գուգադիպող Կիրակի օրը:

6.- Հայաստանեայց եկեղեցւոյ խաչի տօներն են.

ա. - - - - խաչի
բ. - - - - - խաչ
գ. - - - - - խաչ
դ. Խ - - - - -:

7.- Խաչվերացէն 13 օրեր ետք Ս. - - - - - ին տօնն է, եւ յաջորդ օրը - - - - - Սուրբ Խաչ է:

8.- Ըսէ՛ մէկ բառով՝ նոր կերտել, նոր շինել

9.- Ամբողջացո՛ւր: Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ -----:

10.- Ամբողջացո՛ւր. Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան -----:

11.- Ո՞վ գրած է:
«Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:

ա. Ս. Պօղոս Առաքեալ
բ. Ս. Պետրոս Առաքեալ
գ. Ս. Յովհաննէս Առաքեալ
դ. Ս. Թադէոս Առաքեալ

12.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Կոյս Մարիամի ծննդեան տօնը.

ա. Սեպտեմբեր 8
բ. Օգոստոս 8
գ. Յունուար 8
դ. Հոկտեմբեր 8:

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ»

Հեղինակ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

2017-ին, 2018-ին եւ 2019-ին լոյս տեսաւ Արամ Ա. Կաթողիկոսի «Հայ Եկեղեցին» գիրքը անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն, արաբերէն եւ պարսկերէն լեզուներով: Ամփոփ, պարզ ու յստակ, ընդգրկուն, ուսանելի գիրք մըն է:

Իր նախաբանին մէջ, Վեհափառ Հայրապետը բացատրած է իր առաջադրութիւնը, ըսելով թէ՛ իր նպատակը չէ եղած Հայ Եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը, ծէսը կամ առաքելութիւնը ներկայացնել. ոչ ալ ուզած է կատարել քննասիրութիւնը անոր պատմութեան մեծ դէպքերուն, յատկանշական երեւոյթներուն, անոր մտքին ու վկայութեան: Այլ ուզած է սեւեռել Հայ Եկեղեցւոյ տեղը քրիստոնէական աշխարհի եւ հայ ժողովուրդի կեանքին մէջ, եւ ցոյց տալ անոր իւրայատկութիւնները: Ըստ Նորին Սրբութեան, այս գիրքը մշակուած է ծանօթացնելու հայ քրիստոնէութիւնը: Եւ որպէս այդպիսին՝ ակնարկ մըն է Հայ Եկեղեցւոյ պատմութեան, անոր հաւատքին եւ անոր վկայութեան:

Գիրքի մուտքին կայ «Ներածութիւն» մը, ուր ցոյց կը տրուի քրիստոնէայ աշխարհին մէջ Հայ Եկեղեցւոյ տեղը. կը խօսուի անոր անուններուն, տիտղոսներուն մասին, եւ կ'ակնարկուի աշխարհով մէկ անոր սփռուածութեան:

«Ներածութիւն»էն ետք, հեղինակը յաջորդական յօդուածներով կը զարգացնէ իր առաջադրութիւնը.-

Առաջին յօդուածը կը վերաբերի պատմութեան, որ համառօտ պատկեր մըն է. կը սկսի առաքելական քարոզչութեան ժամանակէն եւ կը հասնի մինչեւ այս օրը:

Երկրորդը՝ նուիրապետութեան, այսինքն՝ եկեղեցական կարգերուն, եւ ժողովական կառոյցներուն:

Երրորդը՝ հաւատքի էական աղբիւրներուն (Ս. Գիրք, Տիեզերական Ժողովներ, Տեղական Ժողովներ, Ծէս, Մեկնողական Գրականութիւն, Վարքագրութիւն, Հայրաբանական գրութիւններ, Հովուական նամակներ եւ շրջաբերականներ, Դաւանական նամակներ) եւ տարրերուն:

Չորրորդը՝ հոգեւոր հարուստ անդութեան. Ս. Պատարագին, Ժամերգութիւններուն, տօներուն, ծիսական գիրքերուն, Խորհուրդներուն եւայլն:

Հինգերորդը՝ մշակութային գործունէութեան: Այս գործունէութեան ներկայացման մեկնակէտին կը խօսի Աստուածաշունչի թարգմանութեան եւ Եկեղեցւոյ սուրբ հայրերէ կատարուած թարգմանութիւններու մասին: Կ'ակնարկէ Հայ մատենագրութեան գլխաւոր հեղինակներուն: Կը յիշէ մանրանկարչութեան, գրչագրութեան, տպագրութեան եւ երաժշտութեան մէջ անոր ծաւալուն ներդրումը:

Վեցերորդը՝ ընկերային ծառայութեան:

Եօթներորդը՝ անոր կրթական դերին:

Ութերորդը՝ միջ-եկեղեցական յանձնառութեան:



Իններորդը զայն կը ներկայացնէ որպէս «Ժողովուրդին եկեղեցին». անիկա միաւորողն է հայութեան, առաջնորդողը անոր:

Տասերորդը՝ մարտահրաւերներուն եւ առաջնահերթութիւններուն: Այժմեական եւ շատ շահեկան յօդուած մըն է ասիկա:

Եւ գիրքի վերջաւորութեան իբրեւ յաւելուած տրուած են՝ Քրիստոնէայ աշխարհի եկեղեցիներուն ցանկը, տառադարձումի էջ մը, Հայ եկեղեցւոյ Վարչական դրութեան պատկերը, Հայ եկեղեցւոյ պատմութեան ընթացքին Աթոռանիստ քաղաքներուն ցանկը, եւ ցանկը կաթողիկոսներուն՝ սկիզբէն մինչեւ այսօր:

Վեհափառը առաջարկած է նաեւ ցանկ մը օգտակար գիրքերու:

Այս գիրքը կը յայտարարէ կենսականութիւնը բարեկարգումի եւ վերանորոգումի յարատեւ գործընթացին: Ծանօթութիւնները հրաւեր են ճանաչումի եւ ինքնաճանաչումի, ուստի՝ ճանապարհի նորովի վերատեսութեան եւ յանձնառու վերաբեւոյժման:



2021-22 Տարեշրջան (42-րդ)

Վերամուտ՝

Կիրակի 12 Սեպտեմբեր, 2021 ժամը 10:30

(3 - 16 տարեկաններու համար)

Կը խնդրուի դպրոց ներկայանալ ժամը 10:30-էն սկսեալ Ձեր
զաւկին/զաւակներուն հետ արձանագրութեան համար:

Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը
10:30 – 1:00

Հետեւեցէ՛ք մեզի

<http://www.sourphagop.org/>



[Sourphagop.org](http://www.sourphagop.org/)



[sh_sundayschool](#)



[SH SundaySchool](#)



514-513-4224

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան